որ կրկին տեղումն, և այս անուրանալի ճշմարտութիւն մի է, երբ Հայոց հոգևորականները իրենց բարեսիրտ և կրօնապահ ժողովրդականաց հետ զիմած են Աստուծոյ տաճարը և կղերը իր սեպուհ և անժխտելի պարտքն կատարեր է, տարակոյս չըկայ, որ Հայոց Ազգը ոչ թէ այսպիսի վտանգներէ ազատուեր է, այլև անգամ մարմնաւոր թշնամիներէն՝ ինչպէս որ պատմութիւնը ցոյց կուտայ Մեծին Ներսիսի բաղկատարածութիւնն Նպատ լեռան վերայ, նոյնպէս և շատերին՝ զորս կթողում ուսումնասէր մտաց ի զիտութիւն։

ՊԷՏՐՈՍ Մ՝ԵՂԵՆԱՆՑ ՏԱՐՕՆԱՑՒ։

Ի 25 Նոյեմբերի 1871 -ի

Ի Գոնիոյ։

(Այս առթիւ և մեք հրապարակաւ կը յայտնենք Նորին Արժանապատուութեան մեր շնորհակալեաց հաւատիքը յաղագս բարեխնամ ջանից ի միխիթարութիւն և յօգուտ Հօտին Քրիստոսի մերազնէից։)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԻՔ

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Ինչպէս յայտնի է Արարատ պատուական Ամսագրոյդ Սեպտ. 30ին հրատարակուած տետրակում քաղաքումն ծագած սոսկալի հիւանդութեան (Խոլերայի) ժամանակ Արժանապատիւ Թադէոս Աւագ քահանայի Բուդաղեանց վեհանձնական հոգւով, քրիստոնէական սուրբ հաւատքով զօրացած յօգնութիւն հանիլը թշուառ հիւանդներին, նորա ամենի սիրտը սփոփելը հոգևոր խրատներով և շատերին օժանդակելը իւր սեպհականութիւնից դեղերի և բժիշկների համար, այդ ամենը բացարձակ ճշմարտութիւններ են։

Խորհրդական Անդամք Մարդասիրական Ընկերութեան կ՝փութան խորին յարգանաք յայտնել իրանց ի սրտէ շնորհակալութիւնը Նորին Արժանապատուութեանը բացարձակ խոստովանելով Ազգի ամբողջութեան առաջին և այս, թէ՝ նոյն Արժանապատիւ Հայրը, արդարև որպէս հաւատարիմ հովիւ Յիսուսից իրան յանձնուած բանաւոր Հօտի վերայ, ամենայն բոպէ իրան հոգեկան պարտաւորութիւն է համարած յայտնի կամ ծածուկ օժանդակութիւն հասցնել ժողովրդական կեանքին և նրանց յառաջադիմութեան և լուսաւորութեան համար՝ Նորա արիաջանութիւնը քահանայական սուրբ պաշտօնի մէջ, Նորա ունեցած համակրութիւնը դէպ ի մեր ազգի յառաջիկաղացութիւնը եթէ ուրիշ հայրերի բարի օրինակ չըկարողացան տալ, գոնէ իւր անունը և յիշատակը կարող են անմահացնել մեր ամենիս սրտերի մէջ։ Երանի՜ թէ՝ ամենայն քաղաքներում մեր համազգայինք այսպիսի բարեջան հոգևոր հովիւների հովանաւորութեան ներքոյ շունչ ծծէին. եթէ ժողովրդի բարոյական յառաջադիմութեան կարապետը ըստ մեծի մասին հոգևորական դասն է, ուրեմն շատ բաղդաւոր ենք Բազուայ Հայերս՝ այսպիսի ճշմարիտ հովուի հոգևոր տեսչութեան ներքոյ լինելով, մանաւանդ որ՝ ամենայն կերպով ժողովրդին օգնական և պաշտպան հանդիսանալ՝ ամենի գործը չէ։ Թող ուրեմն Արժանապատիւ Հայրը իւր հաւատարիմ ծառայութեան փոխարէնին անկարծիք սպասէ ամենողորմած Տէրից։

Նորերումս նոյն Արժանապատիւ Հայրը խմանալով որ, Մարդասիրական Ընկերութեան խորհրդական Անդամները աշխատում են ճոխացնել Գրադարանը, Թանգարանը և բարեկարգել Ընթերցարանը, որոնք ամենահարկաւորն են մեզ ամենիս, չնայելով իւր ընտանեաց ապրուստի համար կրած նեղութիւններին՝ մի ուրախալից զբրութեան հետ բաց ի 30 կոտոր գրքերից և ամենաթերթերից նուիրեց նաև 10 բուբլի արծ. յօգուտ Գրադարանին, խոստանալով կարողութեանը չափով ոչ միայն հետզհետէ օգնութիւն հասցնել, նաև աշխատել և գտնել այլ նուիրատուք յօգուտ նոյն Գրադարանին։ Ուստի խնդրեմ Արարատի պատուական էջերում տեղի շնորհելով սրան՝ յայտնել Անդամների դէպ ի նոյն Արժանապատիւ Հայրը ունեցած շնորհակալութեան հաւատիքը ի լուր մեր սիրելի ազգայնոց։

ԱՒԵՆԱՊԱՏԻՒ Ս. Վ՝ԱՐՇԱՖԵԱՆՑ։

Ի 27 Նոյեմբ. 1871 -ի

Ի Բոֆոս։